# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 09.09.2017թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**23.08.2017 17:12**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին» **07.08.2017թ. № 225-Լ որոշմամբ *2017 թվականի սեպտեմբերի 9, ժամը 09$^{00}$-ից մինչև 18$^{00}$ Երևան քաղաքի Զաքիյան 2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ընդհանուր ժողով)՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն.***
- ***ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության (1.5 կետի) փոփոխության հաստատում:***

Ընդհանուր ժողովի ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնելու ընթացակարգը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 9-րդ գլխի կանոններով, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.01.2017թ. № 2/2-Լ արձանագրությամբ հաստատված Դիտորդների հավատարմագրման կարգով:

Ըստ գործող ընթացակարգի՝ Ընդհանուր ժողովին դիտորդական առաքելություն կարող են իրականացնել ստորև թվարկված կազմակերպությունները (այսուհետ՝ Կազմակերպություն).

1) միջազգային կազմակերպությունները.

2) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական կամ հյուպատոսական կազմակերպությունների ներկայացուցիչները.

3) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հասարակական կամ այլ ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին.

4) Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատված ցանկում նշված հասարակական կազմակերպությունները.

5) զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները:

**Ընդհանուր ժողովին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կազմակերպությունը պետք է հավատարմագրվի:**

**Կազմակերպությունը կարող է <u>իր նախաձեռնությամբ</u> դիմել հավատարմագրման համար, որի դեպքում հաշվիչ հանձնաժողովին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝**

ա) դիմում՝ նշելով դիտորդական առաքելություն իրականացնող անձանց ցանկը, ոչ ավել, քան 3 (երեք) ֆիզիկական անձից (դիտորդի անունը, հայրանունը, ազգանունը, դիտորդական կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը);

բ) ցանկում նշված ֆիզիկական անձ դիտորդների գրավոր համաձայնությունը ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության դիտորդներին վերաբերող կարգին և սույն կարգին ենթարկվելու վերաբերյալ;

գ) հայտարարություն, որ չի սատարում որևէ թեկնածուի;

դ) կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի պատճենները:

**Ընդհանուր ժողովին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով Կազմակերպությունները կարող են հավատարմագրվել ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:**

Որպես դիտորդ առաջադրված անձինք իրենց դիտորդական առաքելությունն իրականացնում են միայն հաշվիչ հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Դիտորդը համարվում է հավատարմագրված դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպության կողմից նրան դիտորդի վկայական տրամադրելու պահից: Հաշվիչ հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին է հանձնում դիմումը ստանալուց ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում:

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությունից քաղվածք («Դիտորդական առաքելություն» գլուխ).**

**Բեռնել Դիտորդների հավատարմագրման կարգը.**

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
հաշվիչ հանձնաժողով

## Առաջարկվող նորություններ

**11.08.2017**ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 09.09.2017Թ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ

**17.08.2017**ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀԻ 09.09.2017Թ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 17.08.2017Թ ԴՐՈՒԹՅԱՄԲ

**31.08.2017**09.09.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՄԱՍԻՆ

**05.09.2017**09.09.2017Թ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })